ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Դրիգոր Արծրունու քսանուհինգ ամեակը։—Պատկերազարդ թերթեր։ Ներսիս. Դպրոցի ակտը։—Հայոց ընկերութիւնների ընդհանուր ժողովները։

«Մուրճ»-ի գոյութեան օրից սկսած անցել է ընդամենը 13 ամիս, բայց նա այդ կարճ միջոցում զբաղուեց մի շարք կարևոր անձերով, որոնք իրանց ժամանակաւայ կեանքի և եղելութիւնների վերայ դրոշմել են մի որոշ կնիք և կամ ազդել են կեանքի և հասարակաց կարծիքի վերայ։ Անձնաւորութիւնների այդ երկար շարքում կային նաև այնպիսիներ, որոնցով զբաղուեց ոչ միայն «Մուրճ»-ը, այլ և հասարակութիւնը։ Այդ անձնաւորութիւնները միատեսակ չէին. կային և այնպիսիներ, որոնց անունները պէտք էր խաւարից դուրս բերել դէպի լոյս աշխարհը և հասարակաց ուշադրութեանը ներկայացնելով, նաև ապագայ սերունդների երախտագիտութեանը արժանացնել։ Այդպիսի ոմն էր Պետրոս Շանշեանը, որի մասին՝ իբր մարդու և գործիչի՝ «Մուրճ»-ը ասաց հետևեալը.

„Կայ մի սերունդ, այժմ ծերունի, որի ներշնչանքը սկիզբն է առնում „Կռունկ“-ից առաջ, բայց որի արտայայտողներից էր „Կռունկ“-ը ինքը. և այդ դպրոցի գլուխն էր հայկական այն մեծ մարդը, որը ներկայ (1889) մարտ ամսի 10-ին իւր հրաժեշտը տուեց այս աշխարհին։ Դա էր Պետրոս Շանշեանը, հիմնադիրը կրօնական-բարոյական կրթութեան հայերիս մէջ։ Ցիսնական և վաթսնական թուականներին գործող անձերից նշանաւորները Կովկասում—Շանշեանի երկրպագուներն են...“ („Մուրճ“, 1889 թ., № 4, երես 557)։

Այդ ծանրակշիռ խօսքերը գրուեցին մի մարդու մասին, որի անունը խաւարի մէջ էր և որը պտտում էր այնպիսի շրջաններում, որոնք „Մուրճ“-ից հեռու են, որպէս երկինքը գետնից։

Երբ, գրականութեան մէջ, այդ մարդու համար պատանդանը պատրաստուեց, սորա վերայ արձան կանգնացնելը դրամական խնդիր էր։ Կազմուեց մի մասնաժողով՝ արդէն վախճանուածի դերեզմանի վերայ արձան կանգնացնելու։ Եւ նա կը գնի...

Ադպիսի մարդկանցից չէր մի այլ մարդ, որով նմանապէս զբաղուեց „Մուրճ"-ը։ Ցիսնական թաւականների մարդ չէ նա, այլ վաթսնական, եօթանասնական, ութսնական և իննսնական թաւականների մարդ է Պերճ Պռօշեանցը, մի շրջանում՝ իւր գաղափարներով, կուսղի ու գործիչի դերով, միւս շրջաններում իւր վիպասանութիւններով, որոնց մէջ նա մնում է մեզանում դեռ ևս չը դերաղանցուած, որպէս գիւղական տիպեր արդիւնաբերող։

Պռօշեանցի լօբէլեանի խնդիրը, որ նոր չէր դնում, վերստին արթնացաւ. կազմուեց մասնախումբ՝ նորա լօբէլեանը կատարելու համար։ Միտքը չը մեռաւ և ոչ էլ մասնախումբը ցրուեց. վերջինս միայն լետաձգեց գործը։ Այդ լօբէլեանը կը կատարուի։

Շանչեանի անունը . պէտք էր խաւարից հանել, Պռօշեանցին պէտք էր միայն ընդունել։ Բայց կային անձնաւորութիւններ, որոնցով զբաղուեց „Մուրճ"-ը, բայց որոնց ոչ խաւարից պէտք էր հանել և ոչ էլ նոցա մասին տեղեկութիւններ հաղորդել։ Նոցա անուններն էլ, գործունէութիւնն էլ մեծ հոսանքների մէջ են պտտում։ Դոցա դիմաց պէտք էր միայն դիրը բռնել։

Ադպիսի անձնաւորութիւններից էր Գրիգոր Արծրունին, որի հրապարակախօսական գործունէութեան առաջին գնահատութիւնը՝ սկսած „Մշակ"-ի գոյութեան օրից՝ պատկանում է նմանապէս „Մուրճ" ամսագրին։

Բայց ոչ ոք, ոչ ոք չը գիտէր և չէր զուշակում, թէ Գրիգոր Արծրունու մասին առաջին գրական քննադատութիւնը դուրս գալուց մի տարի և քանի մի ամիս լետոյ՝ նորա քսան և հինգ ամեակը պէտք է տօնուէր։ Այն հրաւէրը, որ կարդաց „Ազբիւր"-ը՝ անսպասելի էր ոչ միայն մեզ, այլ և ամենքի համար։ Գրիգոր Արծրունու անունը շատ է կապուած „Մշակ"-ի անունի հետ, որպէս զի կարելի լինէր այդ երկուսի լօբէլեանները իրարից բաժանել։ Բայց բանից երևաց, որ Գրիգոր Արծրունին իւր առաջին լօդուածը տպած է եղել նախկին „Մեղու Հայաստանի" լրագրում, 1865 թաւականին, ուրեմն 25 տարի առաջ։ Գրիգոր Արծրունին ունի կուսակցութիւն, որի համար բաւական է միայն տօնի օրուայ ընտրութիւնը ար-

դարացնել և իսկոյն էլ կը տօնի նա։ Բայց կայ և մի աւելի մեծ հասարակութիւն, որը, առանց մոլեռանդ հաւատացողներից լինելու, ուրախութեամբ կ'ընդունի մի այդպիսի տօն, քաջ գիտենալով, որ դորանով նա մի ցոյց արած կը լինի ի վիշատակ այն ուրախ դաղափարական բոպէների, որ բաղմիցս ներկայացրել է „Մշակ"-ի անցեալը լուսաջաղէմ կուսակցութեան համար։ Ես կարծում եմ, որ տօնի յաջողութեան համար կան բոլոր կարևոր պայմանները։ Բայց յաջողութիւն ասելով, ես հասկանում եմ ոչ միայն մասնակցողների բաղմութիւնը, այլ և այն միտքը, որ տօնի կազմողները կը տան այդ տօնին։ Տօնել Արծրունուն կարելի է միայն դաղափարական մի քանի անցած բոպէների համար, իսկ դրա աւելի քան վիշատակած են «Մուրճ»-ի վերոյիշեալ քննադատական յօդուածում։

Հայ պարբերական հրատարակութիւնները, մեզանում, մինչ վերջին ժամանակներս տարածւում էին միմիայն խօսքի ոյժով։ Այժմ, քանի մի տարիներից ի վեր, մի քանի խմբագրութիւններ եկել են այն եզրակացութեան, որ, մի հրատարակութիւն ժողովրդի մէջ տարածելու համար, ամենալաւ միջոցն է նորան պատկերազարդ դարձնել. „Աղբիւր", „Արաքս", „Տարազ", „Արձագանք"—ահա այն պատկերազարդ հրատարակութիւնները, որ մենք այժմ ունինք։ Իմ խորհրդածութիւնների միջից ես հեշտութեամբ կարող եմ մի կողմ դնել „Աղբիւր"-ը, որը գոյութեան իրաւունք ունի իբր երեխաների ամսագիր։ չը նայած որ նա ունի մի երկրորդ բաժին, որի մասին չ'արժէ խօսելը, այն աստիճան նա ցայժմ եղել է անբովանդակ, անդոյն և անհետաքրքիր։ Իսկ երեխաների գրականութիւնը ես թողնում եմ մի կողմ, զբաղուելու համար այն պատկերազարդ հրատարակութիւններով, որոնք քիչ թէ շատ ընդհանուր նշանակութիւն ունին։

Դոցա մասին ճիշդ կարծիք կազմելու համար, նախ ես ինձ ու ինձ մի հարց եմ դնում՝ ինչ կը լինէին այդ հրատարակութիւնները, եթէ նոցանից խլենք պատկերները։

Պատասխան՝ „Արաքս"-ը, առանց պատկերների, կը մնար նոյն „Արաքս"-ը, ինչ որ է նա, այսինքն, լաւագոյն դէպքում, մի պարբերական ժողովածու յօդուածների, նուիրած գլխաւորապէս տաճկա-հայերի կեանքին։

„Տարազ"-ը, իւր ոչ տարազի, այլ գրական բաժնում, կը լինէր մի իւրատեսակ ամսաթերթ ահա ինչ մտքով վերցնել երկու վէպ հասարակ մեծութեամբ և այդ երկու վէպը բաժանել 12 կամ 24 մասի, իսկ եթէ շատ մեծ վէպեր են՝ 36 կամ 48 մասի ամեն մինը և ամեն մի մասը հրատարակել ամիսը մի անգամ, մինչև որ նոքա կը վերջանան, հոգ չէ թէ երբ։

„Արձագանք"-ը, առանց պատկերների, կը լինէր նոյն շաբաթաթերթ „Արձագանք"-ը, ինչ էր և առաջ, միայն թէ աւելի նուազ յօդուածներով։

Ահա ինչ կը լինէին այդ հրատարակութիւնները, եթէ նոցա միջից խլէ-ինք պատկերները։

Բայց ահա և մի երկրորդ հարց. ինչ են աւելացնում պատկերները այդ բովանդակութեամբ թերթերի վերայ։ Պատկերները, „Արաքս"-ում, կենդանացնում են այն, ինչ պատմած է նոյն իսկ ժողովածուի մէջ. այստեղ նկարը միայն պատկերացնում է պատմածը։ „Տարազ"-ի մէջ պատկերների կամ նկարների մեծագոյն մասը չեն վերաբերում այն բանին, ինչ նորա գրական արժէքը պիտի կազմէր։ „Արաքս"-ի մէջ մի պատկեր դնում է, մեծ մասամբ, որովհետև մի գրուածք կայ. իսկ „Տարազ"-ի մէջ, ընդհակառակը, մի բան նկատում է, որովհետև պատկերը կայ։ „Տարազ"-ում, բուն էութեան վերաբերելին՝ այն մի-մի հատ նկարներն են, որոնք վերաբերում են տպւոդ վէպերից մէկին։ Իսկ միւսները՝ բոլորովին երկրորդական նկարներ են։

„Արձագանք"-ի մէջ նկարները ոչինչ կապ չ'ունեն թերթի բովանդակութեան և որ գլխաւորն է՝ ուղղութեան, թերթի ձգտումների հետ։ „Արձագանք"-ը բուն հրապարակախօսական թերթ էր և ուզում է մնալ այդպէս։ Բայց, գուցէ հակառակ խմբագրութեան դիտաւորութիւններին, նորա նկարները, ինքն ըստ ինքեան վերցրած, այնքան չքեղ և այնքան հրապուրիչ են, որ թերթի հրապարակախօսութիւնը իսպառ խեղդւում է։

„Տարազ"-ի մասին, սակայն, կարելի է և այս նկատել, որ նորա նկարները, եթէ չեն էլ բղխում բովանդակութիւնից, բայց աւելի են վերաբերում հայ ժողովրդին, հայկական հողին ու կեանքին, քան „Արձագանք"-ի նկարները։ Ընդհանրութիւնը գոնէ այդ տպաւորութիւնն է անում։

Դատողութիւն կազմելու բոլոր պայմանները նկատած լինելու համար, պէտք է չը մոռանալ, որ „Արաքս"-ը լոյս է տեսնում ընդամենը վեց ամիսը մի անգամ, սովորական մեծ ամսագրի չափով, „Տարազ"-ը ամիսը մի անգամ, երկու թերթ մեծութեամբ, „Արձագանք"-ը շաբաթը մի անգամ, նմանապէս երկու թերթ մեծութեամբ և որ նոցա գներն են տարեկան 3 ր., 3 ր. և 10 ռուբլի։ Այս համեմատութեան մէջ „Արաքս"-ը, որը տարին կարող է տալ միմիայն մի տասնեակ նկարներ, գրեթէ կորցնում է պատկերազարդ հրատարակութիւնների բնաւորութիւնը, անխախտ պահպանելով, սակայն, իւր յատուկ բնաւորութիւնը իբր ժողովածու։

Մնում են „Տարազ" և „Արձագանք," որոնք, այսպէս ասած, մրցում են իրար հետ։ Գոնէ այդպէս է հասարակական կարծիքը։

„Արձագանք"-ը, եթէ կարծում է թէ հրապարակախօսական օրգան է մնացել, սխալւում է։ Իբր պատկերազարդ թերթ, նա չ'ունի պատկերազարդ թերթերի հեշտ ընթերցանելի բովանդակութիւնը։ Եթէ „Արձագանք"-ը կարծում է թէ իւր գեղեցիկ և գրաւիչ նկարներով նա տարածում է „Արձագանք"-ի „գաղափարները",—նա չարաչար է սխալւում։ Իւր նկարների յաջողութեան շնորհիւ „Արձագանք"-ը կարող է նոյն իսկ մեծ ընդունելու-

թիւն գտնել մօտիկ և հեռաւոր տեղերում, նորա բաժանորդների թիւը կարող է կրկնապատկուել և եռապատկուել,—բայց այնպէս ինչպէս նա այժմ է խմբագրւում, նա անգամ տաղտկալի է։ Պատկերազարդ շաբաթաթերթի գլխաւոր նպատակն է լինում՝ շաբաթական կեանքը ներկայացնել պատկերներով։ Դիցուք թէ այդ պահանջը չի կարելի անել մի հայ պատկերազարդ թերթին, որովհետև տեղական լաջող փորագրողներ չը կան, որ կարելի լինէր պատկերները այդպէս կարճ միջոցում պատրաստել տալ։ Բայց ընթացիկ կեանքին հաշիւ տալը միանգամայն պարտաւորիչ է մի պատկերազարդ շաբաթաթերթի համար, թէ չէ նոյն իսկ ամենագեղեցիկ պատկերները վերջ ի վերջոյ կը կորցնեն իրանց հետաքրքրութիւնը։ Պարտաւորիչ չէ, որ բոլոր պատկերները մեր կեանքից լինին, բայց ամեն մի պատկեր պէտք է իւր հրատարակութեան առիթն ունենայ, և այդ առիթը պէտք է ընթերցողը իմանայ։

Դէպի „Տարազը“ մեղմօրէն կը վերաբերուէի, եթէ միայն նորա խմբագրութիւնը իւր առաջին իսկ համարում լաւտարարած չը լինէր, իբր թէ նորա, „Տարազ“-ի, շուրջն են հայ առաջնակարգ գրողները...։ Կը գտնւի արդեօք խելքը գլխին մի հայ մարդ, որը իրան թոյլ տար մի այդպիսի խօսք, մի այնքան աննշան թերթիկի հրատարակութեան առիթով, ինչպիսին է „Տարազ“-ը, գոնէ այժմեան „Տարազ“-ը...։ Այդպիսի խօսքը կեղծ դիրքի մէջ է դնում գոված հրատարակութիւնը և ամօթանք բերում ամբողջ խմբագրութեան։ Դէ խօսք չի կարելի էժանութեան պատճառով ամեն բան արդարացնել. խօսք չի կարելի ասել՝ քանի որ ես մի պատկերազարդ թերթ եմ տալիս հայ ազգին, 2½ կամ 3 բուբլիով միայն, ուրեմն ես իրաւունք ունիմ նաև ամեն լիմարութիւն ասել։

Ես այստեղ իմ ընթերցողներին ուրիշ բան չեմ ասում քան այն, ինչ մասնաւորապէս արդէն բերանացի լաւտնել եմ „Տարազ“-ի խմբագիր պ. Տիգրան Նազարեանցին, պ. Աւետիք Եղեկեանի ներկայութեամբ, „Տարազ“-ի առաջին համարի լոյս տեսած օրը, երբ նոքա հետաքրքրուեցին իմանալ իմ կարծիքը „Տարազ“-ի մասին. այնպէս որ եթէ «Մուրճ»-ը չը շտապեց լաւտարարել „Տարազ“-ի լոյս տեսնելը,—ես կարծում եմ, որ դորանից նեղացողները չը պէտք է լինէին նորա խմբագրողները։ „Տարազ“-ի բովանդակութիւնը է և մնալու է անբովանդակ, անհետաքրքրական։ Հետաքրքրութիւն ստեղծելու համար նա ստիպւած կը լինի դիմել լաւտարարած ծրագրից դուրս բաների։ Եւ կամ նա պէտք է դառնայ մի շաբաթաթերթ, որպէս „Արծագանք“-ը, բայց այլ ծրագրով։

Այս վերջին երկու ամիսներում մի առանձին իրարանցում է նկատում մի քանի հաստատութիւնների մէջ. Ներսիսեան Դպրոցը ունեցաւ ակտ, ուր, ի միջի այլոց, կարդացուեց հոգաբարձական հաշիւը Դպրոցի ելքի և մուտքի մասին. կարդացուեց տեսչական հաշիւ Դպրոցի ուսումնական մասին։ Ակտը վաղուց չը տեսնուած մի երևոյթ էր և ի հարկէ ուրախալի երևոյթներից է։ Ինչ վերաբերում է ելքի և մուտքի հաշուին, «Մուրճ»-ը հրատարակում է ներկայ համարում։ Բայց միայն մի քանի նկատողութիւններ. ինչու մինչ մօտ 60 հազար եկամուտ ունեցող մի հաստատութիւն պարտաւորութիւն չի համարում մի տպագրած հաշիւ ներկայացնել հասարակութեան։ Դա աւելի քան անփոյթութիւն է՝ դա մի արհամարհանք է հասարակութեան դիմաց։

Պաշտօնական թուղթը մեզ լայանում է, թէ որդեգիրներից ամեն մէկը 300 բուբլուց մի բան աւել է նստում։ Ես կրկին զարմանում եմ այդ բանի վերայ. այդ ինչպէս է իւրաքանչիւրը նստում այդքան գումար, քանի որ ելքի մէջ ցոյց է տրուած որդեգիրների վերայ ծախք 3.947 ր. 86 կ. սնունդի և հանդերձեղէնի և այլ պիտոյքների համար և 181 ր. 08 կ. ընթերցանութեան գրքերի համար, ուրեմն միասին 4036 ր. 61 կոպ.։ Եւ որովհետև որդեգիրներ ընդամենը 24 հոգի են, ուրեմն նոցանից ամեն մէկը նստում է ոչ թէ 300 բուբլուց աւելի, այլ ինչ որ 170 ր.։

Բացի այդ բոլորից, ժողովուրդի համար հաշուի այդ տեսակ ձևը շատ կարճ է։ Ժողովուրդը կ'ուզէ իմանալ մանրամասնութիւններ ահա ինչ կէտերի նկատմամբ՝ չինութեան և նորոգութեան կալուածոց (3.947 ր. 86 կ., ուրեմն գրեթէ 4.000 ր.) և դին մոմոց և այլ ծախուց ուխտաւորներից (2.364 ր. 7 կ.)։ Քանի որ այդ կէտում լատկապէս լիշուած է՝ դին մոմոց, ուրեմն պէտք է ենթադրել, որ այդ գումարի մէջ մոմերի գինը մեծագոյն մասն է կազմում։ Ինձ համար այդ ուղղակի անհասկանալի է։

Եւ մի վերջին նկատողութիւն։ Պարոն հերթական հոգաբարձուն, վերջացնելով իւր խօսքը կորած 4.000 բուբլու մասին, լայտարարեց, թէ երբ հաշիւները կը վերաստուգուեն, այդ մասին իւր ժամանակ կը զեկուցանի էջմիածնի սինոդին։ Բայց ինչու ոչ նաև ժողովրդին։ Որ սինոդին պէտք է զեկուցանել, դորա մասին ով կարող է կասկած ունենալ։ Ժողովուրդը չի հետաքրքրում, թէ հոգաբարձութիւնը կը զեկուցանէ սինոդին, թէ չի զեկուցանիլ, որովհետև սինոդը կամ Վեհափառ Կաթողիկոսը կարող է նաև ստիպել, որ իրան զեկուցանեն այդ մասին, եթէ հոգաբարձութիւնը կամակորի իւր պարտականութիւնը կատարել։ Ոչ, ժողովուրդը ուզում է, որ հոգաբարձութիւնը պարտք ճանաչէ իրան՝ ժողովրդին զեկուցանել ամեն տարի Դպրոցի գործերը, այն ժողովրդին, որը նորան ընտրում է։ Այդ է պահանջում պարզ տրամաբանութիւնը, այդ է պահանջում լաւ սովորութիւնը, որովհետև այդ են պահանջում ոչ միայն ժողովրդական, այլ և նոյն իսկ դպրոցական շահերը։

Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը, Հայոց Բարեգործական Ընկերութիւնը և Հայերէն Գրքերի Հրատարակութեան Ընկերութիւնը ունեցան իրանց տարեկան ընդհանուր ժողովների նիստերը փետրուար—մարտ ամիսներում։ Պաշտօնակատար անձերի մասնակցութիւնները ամենքին ընդհանուր էր, որպէս նաև նախահաշիւների հաստատումը։ Հայուհեաց Բարեգործութեան Ընկերութեան մէջ տիկին Լիդիա Թամամշեան պարզեց իւր մի առաջարկութիւնը, որով Թիֆլիսի բոլոր հայոց օրիորդական դպրոցների մէջ ձեռագործական դասաւանդումը պէտք է ենթարկուէր այդ ընկերութեան վերահսկողութեան, որը ունի իւր սեպհական արհեստագիտական ուսումնարանը աղջիկների համար և որը այդ իսկ պատճառով աւելի ձեռնհաս է այդ խնդրի մէջ, քան միւս ուսումնարանները։ Ժողովը, սակայն, չ'ընդունեց այդ առաջարկութիւնը, կարծելով, որ նա դրանով ձգտած կը լինի միջամտել միւս դպրոցների վարչութիւնների մէջ՝ այդ քայլի բոլոր անախորժ հետևանքներով։

Հայոց Բարեգործական Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որը նախկին տարիներում վերջացնում էր իւր գործը մի նիստում, այս անգամ երեք նիստ ունեցաւ երեք շաբաթում։ Այս անգամ ընկերութեան ամենագլխաւոր ստեղծագործութիւնն էր՝ Կենդրոնական Հայոց Գրադարանի հիմնելը։ Գրադարանը այժմեանից համարւում է հիմնուած, բայց ոչ բացուած։ Ընկերութիւնը յատկացրեց այդ գործին տարեկան եկամուտի բոլոր մնացորդը, այն է 800 ռուբլի, այն մտքով, որ մի քանի տարի այդպէս շարունակելով, բացի մասնաւոր նուիրատուութիւններից, կը գոյանայ այն գումարը, որով կարելի է բացել գրադարանը և ունենալ ծախքերի համար հարկաւորուած գումարը։ Գրադարանը աշխատելու է ունենալ բոլոր հայ գրքերը, թէ ցայժմ լոյս տեսած և թէ ապագայում լոյս տեսնելի, իսկ օտար լեզուներով գրուածներից այնպիսիք, որոնք վերաբերում են հայոց գրականութեան ու պատմութեան և Արևելքին առհասարակ. իսկ ընդհանուր գրականութեան վերաբերեալ գրքերի մասին որոշուեց, որ այդպիսիք ընդունուեն գրադարանի մէջ, եթէ նոքա նուիրուեն, բայց որ ընկերութիւնը իւր միջոցներով չը պէտք է նոցա ձեռք բերէ։

Ընդհանուր ժողովի որոշումը այս վերջին կէտի վերաբերմամբ շատ հասկանալի է մի քաղաքի համար, որպիսին է Թիֆլիսը, ուր կան բազմաթիւ թէ հասարակաց և թէ մասնաւոր գրադարաններ, ընդհանուր գրականութեան վերաբերեալ գրքեր պարունակող, բայց չը կայ մի հատը, ուր կարելի լինէր գտնել բոլոր հայերէն գրքերը։ Այդ մասին գանգատը շատ և շատ վաղուցւանից է. մինչև անդամ ամօթանք էր համարւում, որ մենք չ'ունինք մի հատիկ կարգին հայոց գրադարան, քանի որ Ներսիսեան դպրոցինը թէ անկարգ է, թէ անլիակատար և թէ ընդհանրութեանը ոչ մատչելի։ Ու վերջապէս պարզ է, որ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը չէր կարող յաւակնութիւն անդամ ունենալ՝ Թիֆլիսում հիմնել

ամեն պահանջներին բաւականութիւն տուող մի գրադարան։ Պէտք էր ուրեմն սահմանափակել։ Արդ, շատ աւելի խելացի չէր արդեօք հարստացնել Թիֆլիսը մի նոր տեսակի գրադարանով, որի կարիքը զգացւում էր վաղուց, քան թէ, կեղծ կոսմոպոլիտութիւն բանեցնելով, եղածների վերայ մի նմանը աւելացնել։ Դուք տեսնում էք, որ աչտեղ հասարակ առողջ դատողութեան խնդիր կայ, որի պարզ լուծման համար պէտք է շնորհաւորել Հայոց Բարեգործական Ընկերութեանը։ Բայց ոչ. պ. Սիմէոն Հախումեանցը այդ առիթով ռուսաց լրագիրներում ջանաց ընդհանրացնել այս միտքը, թէ հայերը իրանց շուրջը չինական պատեր են շինում, որպէս զի դրսի աշխարհը իրանց անմատչելի մնայ!!!

Հայերէն Գրքերի Հրատարակութեան Ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովի նիստին ներկայ էին այս անգամ ոչ մօտ 80, որպէս անցեալ տարի, այլ միայն 40 հոգի։ Անցեալ տարի նոր անդամների եռանդը ծագել էր հին վարչութեան դէմ ագիտացիա անելու ցանկութիւնից, իսկ այս անգամ այդպիսի ցնցող խթան չը կար։ Այդ ցոյց է տալիս, միեւնոյն ժամանակ, որ այժմեան գրագէտ դասակարգը, որի համար յատկապէս այդ ընկերութիւնը մեծ արժէք պէտք է ունենար, դեռ ես մի լուրջ հասարակութիւն չի կազմում։ Եւ ես չեմ զարմանալ, որ դալ տարի անդամների թիւը աւելի էլ սակաւ լինի։ Կենդրոնախոյս ոյժերի ջանքերին պէտք էր հակադրել մի ըստ ամենայնի լարուած և համակրելի խմբագրական մասնաժողով։ Ես գոնէ կարծում եմ, որ այս անգամուայ մասնաւոր ընտրութիւնները նախկին խմբագրական կազմի վերայ պլիւս չ'աւելացրին։ Ընկերութիւնը ժողովրդականութիւն ստանալ և սիրուած լինել կարող է միմիայն առատ և ժամանակների պահանջներին համապատասխան գործունէութիւնով։ Իսկ ընտրելով մարդիկ, որոնց անունների հետ չեն կապուած, չեմ ասում ծրագիր, բայց գոնէ լոյսեր,—այդ նշանակում է վատ ընտրութիւններ կատարել և ընկերութեան ոգին թուլացնել։ Այդ բոլորը պարզ ցոյց է տալիս, որ ընկերութիւնը վերջնականապէս ոտի կանգնեցնելու համար դեռ պէտք է աշխատել, հասարակաց ուշադրութիւնը արթուն պահելով։

Գալով այժմ վարչութեան, իբր նորա փոխ-ատենապետ ընտրուեց պ. Ց. Սպենդերեան, որը այդպիսով փոխարինեց նախկին փոխ-ատենապետ բժշկ. Տէր-Գրիգորեանցին (Թիֆլիզեցի), որի միակ ծառայութիւնը կայացաւ նորանում, որ ընկերութիւնը աղատեց իւր ոչինչ բարին չը խոստացող անդամութիւնից։

Խմբագրական մասնաժողովը այսուհետ կազմւած կը լինի հետեւեալ պարոններից՝ Մ. Տիգրանեան, Ա. Բալանթար, Ս. Սպանդարեան, Գ. Միրզոյեան, Ի. Ցարութիւնեան, Մ. Աբելեան, Մ. Աբեղեան։ Իսկ վարչականը կը կազմեն՝ պ. պ. Փ. Վարդանեան, Ց. Սպենդերեան, Գիւտ քահ. Աղանեան, Կ. Եաղուբեան, ինժ. Տէր-Գրիգորեան և Մ. Դանագեոզ։

ԼՈՒՍԻՆԻ